Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԳԻՐԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ՝ ԵՐԴՄՆԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

(21 մայիսի, 2020 թ.)

Մեծարգո՛ Նախագահ,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ողջունում եւ Հայրապետական Մեր օրհնությունն ու բարեմաղթանքներն ենք բերում Ձեզ՝ երդմնակալության եւ Արցախի Հանրապետության Նախագահի պարտականություններն ստանձնելու առիթով։

Մեր ժողովրդին քաջ ծանոթ է Ձեր անձը՝ որպես Արցախի անկախության զորացման եւ արցախահայության կյանքի զարգացման գործում գովելի ներդրում ունեցող քաղաքական գործիչ։ Դուք ջանք ու նվիրում եք բերել Արցախի ազատագրության պայքարին, արցախահայության նոր կյանքի կառուցմանը՝ տարիներ շարունակ զբաղեցնելով պատասխանատու բարձր պաշտոններ։ Արցախի անկախության տարիներին մեր ժողովուրդը արձանագրել է նշանակալի ձեռքբերումներ եւ հաղթանակներ, որոնք պիտի բազմապատկվեն՝ ի նպաստ պետականության զորացման, Արցախի Հանրապետության ճանաչման, որը մեր աշխարհասփյուռ ժողովրդի արդար սպասումն է եւ շուտով իրագործված տեսնելու ձգտումն ու ակնկալությունը։

Դուք ստանձնում եք Նախագահի պարտականությունները աշխարհում ծավալվող համավարակի բարդ պայմաններում, որը դժվարություններ է ստեղծել նաեւ արցախահայոց կյանքում։ Մաղթում ենք, որ Ձեր փորձառությունը, հայրենի երկիրը զորացնելու նվիրումի Ձեր ոգին, Արցախի զարգացման Ձեր ծրագրերը նոր բարի արդյունքներ բերեն մեր ժողովրդի կյանքին՝ ի խնդիր առկա մարտահրավերների հաղթահարման եւ երկրի խաղաղության, բարօրության ու առաջընթացի ամրապնդման։

Աղոթում ենք, որ Աստված Սուրբ Հոգու ամենառատ շնորհներով զորացնի Ձեզ՝ պարգեւելով քաջառողջ արեւշատություն, մշտանորոգ ուժ ու եռանդ Ձեր նվիրյալ առաքելության ճանապարհին։

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ